ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Ալիկ Ղարիբյան
Գայանե Գալստյան

ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *սփյուռք, համայնք, հայապահպանություն, ինքնություն, արտագաղթ, կուսակցություն, գաղափարախոսություն, գործունեություն, դեսպանատուն, ներգաղթ:*

ԱՄՆ-ում ՀՅԴ-ի կազմավորման արմատներն ու գործունեության ուղեծիրն անմիջականորեն կապվում են ԱՄՆ հայերի զանգվածային արտագաղթի, ապա նաև՝ հայկական գաղութի ու համայնքի ձևավորման հետ: Այդ գաղութը դարձավ ամերիկահայության, ինչպես նաև ամբողջ հայության համար հրատապ խնդիրների (ինքնակազմակերպում, ազգապահպանություն, հայապահպանություն և այլն) այն հիմնօղակը, որը պարարտ հող ստեղծեց ԱՄՆ-ում թե՛ տարաբնույթ ու բազմագործառույթ հայկական միությունների, ընկերությունների, կազմակերպությունների և թե՛ հայկական կուսակցությունների կազմավորման համար: Վերջիններս կոչված էին ազգային խնդիրները միջազգային ատյաններում վեր հանելու և քննարկելու համար, ինչը երբեմն որակվում է որպես շատ ավելի գաղափարական, քան իրատեսական գործելակերպ:

Արդեն ՀՅԴ կազմավորումից մեկ տարի անց՝ 1991 թ., հրապարակ եկած «Դրօշակ» պաշտոնաթերթի առաջին համարում ակնհայտորեն ի հայտ է գալիս ՀՅԴ միտվածությունը ԱՄՆ-ում հաստատված հայերի համախմբմանը: «Դրօշակ»-ում նշվում էր. «Միացյալ նահանգների գաղթական հայերը պատրաստվում են մի կենտրոն հաստատել բոլոր տեղերի գաղթական հայերի մէջ. միացնել Հնդկաստանի, Եւրոպայի զանազան տեղերի, Ամերիկայի եւ եթէ կարելի է եւ Ռուսաստանի հայերին եւ դոցա կողմից ընդրել մի կենտրոն, որը իրեն նուիրէր Հայաստանի ինքնուրոյնութեան հարցին,– ահա նպատակը: Կենտրոնը իբրեւ ընտրուած ներկայացուցիչ մարմին, իրաւունք ունի ամեն տեսակ միջոցների դիմել՝ առաջ մղելու հայոց հարցը: Նախապատրաստական յանձնաժողովը Նիւ Եորքից հրաւէր է կարդում բոլոր գաղթական հայերին իրենց կարծիքը յայտնելու այդ մասին, եւ պատրաստուելու այդ ընդհանուր ժողովի համար, որ մտադրութիւն կայ կայացնել 1891 թւի նոյեմբերին Եւրոպայի քաղաքներից մէկում: Այս առիթով մենք կասենք, որ միտքը շատ համակրելի է, եւ վաղուց հարկաւոր էր զանազան երկրների գաղթական հայերին միանալ, ոչ թէ առանձին առանձին երգ երգել»[1]: Կարծում ենք՝ սա ևս նախադրյալ էր հետագայում ՀՅԴ գործունեության անհրաժեշտությունը գիտակցելու և այն նաև ԱՄՆ-ում ծավալելու համար: Դա փաստում է այն իրողությունը, որ ԱՄՆ-ի գաղթական հայերին մեկ միասնական գաղափարի շուրջ միավորելու, համախմբելու արժևորումը ՀՅԴ կողմից՝ պետք է պայմանավորեր նաև ՀՅԴ մուտքը ԱՄՆ: Այդ կուսակցությունը հետագայում դառնալու էր առաջատար ուժ, ինչպես նաև ստանձնելու, ուղղորդելու և ավելի ամուր հիմքերի վրա էր դնելու այդ միասնական գաղափարի՝ Հայկական հարցի առաջադրման, Հայաստանի ինքնուրույնության հարցի իրագործումը:

Հայերի՝ ԱՄՆ արտագաղթի ակունքները սկիզբ են առնում XVII դ. կեսերին, որը հետագայում շարունակվել է տարբեր քանակաժամանակային ընդգրկումներով և հարատևել մինչև օրս: ՀՅԴ մուտքը ԱՄՆ պայմանավորվեց ինչպես հայ բնակչության սփռվածությամբ, XIX դ. 70-ական թթ. վերջերին հայկական համայնքի ձևավորմամբ, այնպես էլ այն նախահիմքերով ու կարևորագույն խնդիրների լուծման հրատապությամբ, որոնք առաջադրեց հայերի զանգվածային գաղթը: Խոսքն առնչվում է հայապահպանության, հայ ազգային ինքնության պահպանության, համասփյուռ հայերի համախմբման և կազմակերպման, հայության քաղաքական ինքնակազմակերպման, քաղաքական ու տնտեսական ազատության ապահովման, հայանպաստ գործունեության խնդիրներին, որոնց կարգավորումն անհեռատեսական կլիներ առանց համախմբող և դրանց

[*] *Հոդվածը ներկայացվել է 30.10.2019 թ., գրախոսվել՝ 15.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*
[1] *«Դրօշակ», 1891, թիվ 1, Մայիս, էջ 9:*

կարգավորումը կյանքի կոչող ներուժի՝ ինչպիսին կոչված էր դառնալու ՀՅԴ-ն՝ ի թիվս ԱՄՆ-ում բնակվող հայկական այլ կազմակերպությունների:

Դեռևս 1880-ական թվականների վերջից արդեն 1500 հայ ունեցող ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ հայ հեղափոխական կուսակցական (հնչակյան, դաշնակցական) գործիչների համար[1]: Հայերի զանգվածային ներգաղթը ԱՄՆ կարճ ժամանակահատվածում պարարտ հող նախապատրաստեց այնտեղ թե՛ հասարակական-մշակութային և թե՛ քաղաքական ակտիվ գործունեություն ծավալելու համար: Նմանօրինակ գործունեությամբ աչքի ընկան հատկապես հայկական ազգային կուսակցությունների խմբակները, մասնավորապես՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և ՀՅԴ-ն: XIX դ. վերջերին արդեն սկզբնավորվել են ԱՄՆ-ում հայկական կուսակցությունների տեղական կազմակերպությունները՝ 1890 թ. ՍԴՀԿ-ի և 1895 թ.՝ ՀՅԴ-ի[2]: Իր գործունեության սկզբում ՀՅԴ-ի՝ ԱՄՆ-ում հիմնադրված տեղական մասնաճյուղը ակտիվ քաղաքական գործունեություն է ծավալում տարբեր նահանգներում: 1890 թ. սեպտեմբերին հրապարակված ՀՅԴ մանիֆեստում նշված է, որ նոր ստեղծված կուսակցության նպատակն է համախմբել հայ ժողովրդի ուժերը, ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն Արևմտյան Հայաստանում[3]: Այն արտահայտվել է ՀՅԴ առաջին ծրագրում, որն ընդունվել է 1892 թ. կուսակցության առաջին ընդհանուր ժողովում (հրապարակվել է կուսակցության «Դրօշակ» պաշտոնաթերթում, 1894 թ.)[4]:

ԱՄՆ-ում ՍԴՀԿ-ի և ՀՅԴ-ի մուտքից առաջ այնտեղ արդեն գործել են Հայկական հարցը ամերիկահայությանը հասանելի դարձնելուն նպատակամիտված խմբակներ ու միություններ: Այսպես, ազգային կուսակցությունների (այդ թվում՝ ՀՅԴ-ի) ամերիկահայ մասնաճյուղի «կորիզը կազմել են արմենական կուսակցության գործիչ Մ. Փորթուգալյանի կողմից դեռևս 1880-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին հիմնված Կաճառ Հայկականը (Ուստր), Հայոց հայրենասիրական միությունը (Ջերսի Սիթի), ինչպես նաև Ծաղիկ Հայաստանին (1890 թ., Բոստոն), Արծիվ Հայաստանին (1893 թ., Մոլտը), Հայկական հարցը Ամերիկայի հայությանը ներկայացնելու կոչված նմանատիպ այլ խմբակներ, որոնք բոլորն էլ, ժամանակի ընթացքում ձուլվելով ու համախմբվելով, նախապատրաստել են 1890 թ. Մասսաչուսեթսի նահանգի Ուստր քաղաքում ամերիկահայ քաղաքական պատմության մեջ առաջին հնչակյան կուսակցության առաջացումը»[5]: Ըստ էության, Հայկական հարցի վերաբերյալ ամերիկահայությանը իրազեկելու, այն ավելի լայն լսարաններում հնչեցնելու ՀՅԴ-ի պահանջատիրական գործունեության առանցքն ու նրա մուտքն ԱՄՆ արդեն իսկ նախանշել էին նշված խմբակներն ու միությունները: Հարկ է հենց այստեղ տեսնել ՀՅԴ-ի ամերիկյան գործունեության գաղափարական հիմքն ու նրա կողմից առաջադրված նպատակների, խնդիրների սաղմերը:

Ամերիկահայերի քաղաքական կյանքի սկզբնական շրջանում՝ 1890-ական թթ., գերիշխող դերը պատկանել է ՍԴՀԿ-ին, ինչը շուտով՝ 1900-ական թթ., փոխանցվել է ՀՅԴ-ին, որը մինչև Առաջին աշխարհամարտը ԱՄՆ-ում եղել է ամենից մեծաթիվ ու արագ աճող հայկական կուսակցությունը: Ինչպես նշում է Մ. Օզանյանը, «մեր գաղութի ամենահին քաղաքական կազմակերպութիւնը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնն է եղած, որ դեռ 1891 թուականէն իր մասնաճիւղերն սկսաւ ունենալ Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ: 1894 թուին կազմուեցաւ Հայկազեան Միութիւն մը, որ սակայն կարճ գործունէութենէ մը յետոյ, այն ալ սահմանափակուելով միայն մի քանի քաղաքներու մէջ, տեղի տուաւ իրմէ շատ աւելի զօրաւոր ու մրցակից ուժերու առաջ: 1896 թուին վրայ հասաւ Հնչակեան կուսակցութեան պառակտումը: Հրապարակ եկան երկու զօրաւոր եւ թշնամի հատուածներ – Հիները եւ Նորերը: Առաջինները իրենց նախկին անու-

[1] *Տե՛ս Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ, «Հայ գաղթականությունը և հայրենիքսփյուռք կապերը 1918-1985 թթ.», միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 18:*

[2] *Տե՛ս Վերանյան Կ., Նահապետյան Հ. և այլք, Հայ համայնքն ԱՄՆ-ում, Ե., 2010, էջ 7-8:*

[3] *Տե՛ս «Դրօշակ», ՀՅԴ օրգան, 1891, № 2, էջ 1:*

[4] *Տե՛ս նույն տեղում, 1894, № 4, էջ 1-4:*

[5] *Ճիկմէճեան Մ. Գ., Խարբերդ եւ իր կաւակները, Ֆրէզնո, 1955, էջ 224, 226: Տե՛ս նաև՝ Հայկ Կ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 990:*

նով եւ դրոշակով, վերջինները՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւն անունով: Ասոնց կատաղի պայքարները արդէն սկսած էին, երբ նոյն թուին՝ 1895-ի վերջերը, Դաշնակցութիւնը եւս Ամերիկայի մէջ սկսաւ իր կոմիտէները ունենալ: Բայց մինչեւ այս թուականը այլեւս վէճեր եւ կռիւներ անսովոր երեւոյթներ չէին Ամերիկայի հայաշատ քաղաքներուն մէջ»[1]:

ՀՅԴ մուտքն ԱՄՆ համընկավ ՍԴՀԿ-ի պառակտման ու վերակազմավորման, գաղափարական ու սկզբունքային խոր տարակարծությունների, բուռն կրքերի դրսևորման հետ: Այս պայմաններում 1895 թ. ՀՅԴ-ն մուտք գործեց ԱՄՆ, որն իր ակտիվ գործունեության շնորհիվ՝ կարողացավ դառնալ ամերիկահայության գաղափարական և կազմակերպական իշխող ուժ: Հետզհետե ԱՄՆ եկան ՀՅԴ-ի առաջին գործիչները, նախ՝ Սուրեն կամ Սիմոն Շիյանը, ապա Վահանյան կամ Հովհաննես Յուսուֆյանը, իսկ 1899 թ. վերջերին՝ Արշակ Վռամյանը: Այնուհետև ԱՄՆ-ի տարբեր վայրերում (Ուստր, Վուստր, Բոստոն և այլն) միմյանց հաջորդում են ՀՅԴ-ի կոմիտեների հրապարակային ժողովները, որոնցում առաջ քաշված գաղափարները, մոտեցումները և տարբեր հարցերի լուսաբանումները հանգեցրին Վերակազմավորված Հնչակյանների հետ առարկությունների, առճակատումների ու բախումների, գաղափարական պայքարի[2]: Ըստ էության, ԱՄՆ մուտք գործելուց ի վեր՝ ՀՅԴ գործունեության գլխավոր նպատակն ու առաքելությունը եղել է ամերիկահայության կուսակցական կյանքում առկա առճակատումները, վեճերը, տարաձայնությունները հարթելու, քաղաքական կազմակերպություններին միասնական գաղափարների շուրջ համախմբելու դժվարին գործը, որն առանց բախումների չընթացավ[3]: Այդ մասին է վկայում նաև «Հայրենիք» ամսագիրը. «1917 թուի Մարտ ամսու սկիզբն էր, երբ Եգիպտոսէն, Փարիզի ճամբով, Ամերիկայի Մ. Նահանգները եկան երեք ծանօթ գործիչներ – Միհրան Տամատեան, Արտաւազդ Հանըմեան եւ Ս. Սապահգիլեան: Բռնած իրենց ձեռքերուն մէջ սիրոյ ու համերաշխութեան ձիթենին, անոնք այդ օրերուն գլխաւոր նպատակ ունեցան՝ նախ եւ առաջ փարատելու մեր գաղութային կեանքի այնքան թանձր, կիրքերով սրուած ու գրեթէ անշնչելի դարձած մթնոլորտը, որմէ յետոյ անոնց դիւրին պիտի ըլլար նաեւ իրար մօտեցնելու քաղաքական կազմակերպութիւնները, այն ատէն թուով չորս – Առաքելական ու Բողոքական եկեղեցիները եւ Բարեգործականը ու, գոնէ ժամանակաւոր կերպով, առաջ բերելու անոնց մէջ գործակցութիւն՝ հիմնական քանի մը խնդիրներու շուրջ: Այդ օրերուն մեր երեք պատուիրակները կատարելապէս յաջողեցան իրենց դժուարին առաքելութեան մէջ»[4]: Եվ այսպես՝ քայլ առ քայլ վերջ դնելով քաղաքական ասպարեզում հնչակյանների գերիշխող վիճակին և ամուր հիմքեր հաստատելով Նոր Երկրում՝ ՀՅԴ կուսակցությունն իր մասնաճյուղերն է հիմնում հայաշատ կենտրոններում՝ Լոուրենսում, Հեյվըրհիլում, Փրովիդենսում, Ուորքեսթերում, Ուայթինսվիլում, Նյու Յորքում, Բոստոնում և այլուր[5]:

ԱՄՆ-ում ՀՅԴ գործունեությունը հանգում էր ժողովների, հրապարակային հավաքների և ցույցերի կազմակերպման: ՀՅԴ հիմնադիրներն էին Սիմոն Շիյանը (Սուրեն), Հովհաննես Յուսուֆյանը, Արշակ Վռամյանը, Արամ Աշոտը, Կ. Սեքլեմյանը, Խ. Գալուստյանը, Շահան Նաթալին, Ատոմ Յարճանյանը (Սիամանթո) և այլք[6]: Այդուհանդերձ ՀՅԴ գործունեությունը ԱՄՆ-ում սկզբնական շրջանում ընթացավ դժվարին ուղիով, քանի որ մի կողմից՝ արդեն վերը նշված՝ ՍԴՀԿ-ի բախումները ՀՅԴ-ի հետ, մյուս կողմից՝ ԱՄՆ-ում կուսակցական կազմակերպական վիճակը մեծ դժվարություններ էին ստեղծում: «Այդ օրերուն (1896 թ., Նյու-Յորք դեռ Դաշնակցութիւնը իր սաղմային վիճակի մէջ էր, կոմիտեները սակաւաթիւ, ընկերներու թիւը խիստ սահմանափակ, նիւթականի չգոյութիւն, Դաշնակցական մամուլի պակասութիւն, եւ ի լրումն այս բոլորին, Հնչակեան կուսակցութեան նորածին Դաշնակցութեան գլխուն իջեցուած հարուածները եւ յարուցած հալածանքը, խաղաղ աշխատանքի խոշոր խոչընդոտներ էին)»[7]:

---

[1] Օվանեան Մ., Կուսակցական բարքերը մօտ քառորդ դար առաջ, «Հայրենիք», 1931, № 4, Փետրուար, էջ 60:

[2] ՀՅԴ ժողովների, ՀՅԴ-ՍԴՀԿ պայքարի մասին առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 62-71:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 60-62:

[4] Նույն տեղում, էջ 59:

[5] Տե՛ս Atamian S., The Armenian Community, New York, 1955, p. 356.

[6] Տե՛ս Վրացեան Ս., ՀՅԴ վաթսունամեակ (1890-1950), Պոսթըն, 1950, էջ Է-Ը: Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, Բոստոն, 1950, էջ 429, 431, 449, 534, 536, 551-554:

[7] Ֆէրահեան Մ. Գ., Էջ մը Յ. Եուսուֆեանի կեանքէն, «Հայրենիք», 1931, № 4 (100), Փետրուար, էջ 136:

1899 թ. մայիսի 1-ին Ա. Վռամյանը Նյու Յորքում հիմնում է ՀՅԴ առաջին՝ «Հայրենիք» պաշտոնաթերթը, որի խմբագիրը Թ. Չարշավճյանն էր: Որպես ազգային հեղափոխական ուժ՝ ՀՅԴ-ն սկսել է վերելք ապրել դարասկզբին, Սասունի դեպքերի ընթացքում (1900-1904 թթ.) ընդհուպ մինչև 1907 թ.[1]: Այդ իրողությունը ազդեցություն թողեց նաև կուսակցական արտասահմանյան մարմիններում:

ԱՄՆ-ում գործող տարբեր կազմակերպությունների և ՀՅԴ-ի միջև հակասություններն ի հայտ են գալիս նաև 1915 թ., երբ, բոլոր հոսանքների հետ ընդհանուր եզր չգտնելով, ՀՅԴ-ի Ամերիկայի Կենտրոնական կոմիտեն առանձին մեծ հանգանակություն է կազմակերպում Ազգային Բյուրոյի համար: «Բոլոր միւս հոսանքները՝ Ռամկավար, Վերակազմեալ, Հնչակեան, Առաջնորդարան, Բողոքականներ եւ Բարեգործականներ միացած էին Դաշնակցութեան դէմ: ...Մօտաւորապէս ամիս մը վերջը մենք ունեցանք հրապարակային-հանգանակային ժողով՝ կամաւորներու համար: Հաւաքեցինք 10.000 տոլար, որմէ 7.500-ը կանխիկ՝ թղթադրամներ եւ ոսկի»[2]: Ամերիկահայ գաղութում կազմավորվող ՀՅԴ-ի գործունեությունը ղեկավարում էր կենտրոնական կոմիտեն էր: Այն ուներ նաև իր պաշտոնական մամուլը, որը կուսակցության գաղափարները տարածելու գործառույթն էր իրականացնում: Գործում էին նաև տեղական կոմիտեները՝ որպես «տեղին վրայ եղող իշխանութիւն, ատենապետները՝ տեսակ մը գիւղապետներ: Դաշնակցական անդամ, կոմիտէ, Շրջ. Խորհուրդ, Կ. Կոմիտէ, Պատգամավորական Ժողով, Բիւրո եւ Ընդհանուր Ժողով,– ասոնք մեծ կազմակերպութեան անհրաժեշտ օղակներն են»[3]:

ՀՅԴ-ն, ի թիվս սփյուռքում կազմավորված և գործունեություն ծավալած զանազան այլ հասարակական ու քաղաքական կազմակերպությունների [Ամերիկայի հայկական համագումար (ԱՀՀ), ՍԴՀԿ, 1921 թ. հիմնադրված ՌԱԿ և այլն], իր ուրույն տեղն ու դերն է ունեցել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված համաժողովրդական շարժման, Հայ դատի հետապնդման աշխատանքների, ինչպես նաև միջպետական կազմակերպությունների, այլ պետությունների ընդհանուր հասարակական կարծիքի ուշադրությունը դեպի Հայ դատը սևեռելուն միտված քաղաքական-քարոզչական գործողությունների իրականացման հետագա ընթացքը, պահանջատիրական գաղափարախոսությունը որոշակիացնելու համար: ՀՅԴ-ն կարճ ժամանակում, ըստ էության, դարձավ ԱՄՆ-ում արդեն կազմավորված, բայց իրեն սպառած և պառակտման եզրին գտնվող ՍԴՀԿ-ի ծրագրային գաղափարների շարունակողն ու իրագործողը: ՀՅԴ-ն «ամերիկահայ համայնքում մշտապես աչքի է ընկել բարձր կազմակերպվածությամբ և ուրույն կառույցների ընդարձակ ցանցով»[4]:

Առաջին աշխարհամարտի ընթացքում ու դրան հաջորդած տարիներին ՀՅԴ-ի գործունեությունը ԱՄՆ-ում հանգում է հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ ամերիկահայերի հետ միասին նրանց սատարելուն ուղղված գործնական ու լուրջ ջանքերին: Դրանք կրել են թե՛ քաղաքական ու դիվանագիտական և թե՛ հասարակական, տնտեսական ու ռազմական բնույթ[5]: Նշանակալի է եղել նաև ՀՅԴ նյութական օժանդակությունը: «Ամերիկահայ գաղութը, մեծ պատերազմի ընթացքին, իր մասնակցութիւնը բերած է հայ դատին երեք ճակատներու վրայ՝ *նիւթական, կամաւորական շարժում եւ պրոպագանդ*: ...Հ.Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ.Կ.-ի հսկողութեամբ եւ անմիջական ղեկաւարութեամբ տեղի ունեցած են երկու խոշոր հանգանակութիւններ՝ Ազգային Բիւրոյի անուան, որոնցմէ առաջինը տուած է 117.000-ի չափ գումար մը, իսկ երկրորդը՝ 125.000- մօտավորապէս 250.000 տոլար: Ազգային Միութիւնը ըրաւ երկու հանգանակութիւն, որոնց արդիւքը եղաւ մօտավորապէս 750.000 տոլար, որի կէսը զօհաբերած են մեր ընկերներն ու համակիրները եւ Բանակի Հանգանակութիւնը՝ մօտավորապէս 400.000 տոլար: Եթէ մենք

---

[1] *Տե՛ս Ճիպմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 227, 300:*

[2] *Միքայէլեան Ա., Գործիչի մը յուշերէն, «Հայրենիք», 1931, № 4 (100), Փետրուար, էջ 139:*

[3] *Նույն տեղում, էջ 140:*

[4] *Նահապետյան Կ. Ռ., Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների» 1997, № 3, էջ 30:*

[5] *Տե՛ս Ավագյան Ք., Առաջին աշխարհամարտը և ամերիկահայությունը, «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. պատմություն և արդիական խնդիրներ», միջազգային գիտաժողով, Ե., 2015, էջ 42:*

նկատի առնենք նաև այն հայտնությունները, որոնք հայտաբերվեցին վերջերս կոնկրետ այս-
տեղ հարկավոր է նշել, որ մեր չարքերը 1914 -էն 1921 թուականը զոհաբերած են մօտավորապէս **մէկ միլիոն տոլար**»[1]:

Հայկական տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների կողքին ՀՅԴ-ն նշանակալի դերակատարում է ունեցել Կովկասյան կամավորական շարժմանը մասնակցելու և Կովկասյան ճակատին աջակցելու գործում: 1914 թ. ԱՄՆ-ի ՀՅԴ ներկայացուցիչները մասնակցել են Կովկասում հայկական կամավորական շարժման կազմակերպմանը: ԱՄՆ-ից ժամանած ՀՅԴ կամավորները գտնվել են Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի հսկողության ներքո և ներառվել գործող հինգ զորախմբերում (հրամանատարներ՝ Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Վարդան): Ինչպես վկայում է Ա. Միքայելյանը՝ չորս անգամ կազմակերպվել են կամավորական խմբեր՝ բաղկացած շուրջ 1000 կամավորից. առաջին խմբում եղել են 260 կամավորներ, երկրորդում՝ 160, երրորդում՝ մոտավորապես 300, իսկ կիլիկյան ճակատը կազմակերպվել է Ազգային Միության հովանավորությամբ[2]: ՀՅԴ-ն աջակցել է նաև ռազմամթերքի, դրամական միջոցների, ինչպես նաև մարդկային ուժի՝ կամավորների առաքմանը[3]:

1915 թ. հունվարի 23-ին Ժնևից ՀՅԴ-ի ներկայացուցիչները դիմել են կուսակցության Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին (ԿԿ)՝ մինչև գարուն զինված խումբ հավաքագրելու և ուղարկելու համար: ՀՅԴ-ն հանձին Ռոստոմի (Ստեփան Զորյան), նաև բանակցել է բրիտանական իշխանությունների տարբեր շրջանների հետ Հայկական հարցի և կամավորական խմբերի կազմության շուրջ: Ի վերջո, ՀՅԴ Ամերիկայի ԿԿ-ն, հաշվի առնելով երկրի տարբեր շրջաններում ստեղծված ծանր դրությունը, նպաստամատույց դրամահավաքին զուգընթաց, որի մասին արդեն նշվեց, 1915 թ. մայիսի 10-ի շրջաբերականով կոմիտեներին է փոխանցել նաև Կովկաս կամավորական խումբ ուղարկելու մասին որոշումը՝ հրահանգելով այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել[4]:

ՀՅԴ-ն սատարել է նաև ԱՄՆ-ի հայության շրջանում հողապահպանության խնդիրների կարգավորմանը՝ ներգրավվելով հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին կամավորականների շարքերում և ցուցաբերելով ֆինանսական աջակցություն: Այսպես, 1917 թ. կովկասյան կամավորական շարժման լուծարումից հետո ՀՅԴ-ն տոգորված կամավորական նոր շարժում ձևավորելու գաղափարով և ամերիկահայության համախմբման գործընթացներով, նույն թվականի մարտի 16-26-ին մյուս կուսակցությունների հետ ներգրավվել է Բոստոնում տեղի ունեցած համերաշխության բանակցություններում, «որոնց ընթացքում էլ կազմակերպվել է Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ)՝ բաղկացած քաղաքական չորս կուսակցությունների (ՍԴՀԿ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, Հայ սահմանադրական ռամկավար), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես ՀՅԴ-ն, միասնականություն են հանդես բերել ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: ...Ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ԱՀԱՄ-ը ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում»[5]:

Պետք է նշել նաև, որ ՀՅԴ կողմից հայոց պետականության ստեղծման, տարածքային և այլ խնդիրների կարգավորման ուղին հարթ չի ընթացել: Այդ մասին է վկայում նաև ՀՅԴ Ամերիկյան շրջանի 29-րդ պատգամավորական ժողովի վերաբերյալ Ս. Վրացյանի զեկույցը, որում մասնավորապես նշվում է, որ ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովում առաջադրված խնդիրների լուծումը (Մեծ

---

[1] *Միքայէլեան Ա., նշվ, աշխ., էջ 142:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 143:*

[3] *Տե՛ս Ավագյան Ք., ԱՄՆ-ի հայերի մասնակցությունը Կովկասյան կամավորական շարժմանը և նպաստը Կովկասյան ճակատին, «Գիտություն», 2017, № 9 (310), սեպտեմբեր, էջ 2:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

[5] *Ավագյան Ք., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության գաղափարների դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, № 2, էջ 44-45:*

Հայաստանի պահանջը և այլն) անիրատեսական էին. «Այսօր, կարծես, այլեւս բոլորի կողմից ընդունուած փաստ է, որ ծովից ծով Հայաստանի պահանջը առնուազն տղայամտութիւն էր: Նա ո՛չ միայն հնարաւոր չէր միջազգային քաղաքական պատճառներով, այլ եւ հայ ազգի ենթակայական պայմաններով: Անգամ, եթէ կարելի էլ լինէր այդ սահմաններով Հայաստան ստանալ, մենք ի վիճակի չէինք լինի այն կազմակերպել ու կառավարել: Այդպիսի պետութեան մէջ հայերը պիտի լինէին փոքրամասնութիւն եւ կուլ երթային մահմետական մեծամասնութեան»[1]: Այս և համանման դիտողություններով Ս. Վրացյանը ցույց է տալիս, թե ինչ դժվարին պայմաններում է գործել ՀՅԴ-ն 9-րդ ընդհանուր ժողովից հետո: Ըստ էության, ՀՅԴ-ի առջև դրված էին բազում կնճռոտ հարցեր, որոնց լուծման համար բավարար չէին ո՛չ դրսի հանգամանքները և ո՛չ էլ հայ ժողովրդի և կուսակցության ներքին վիճակը: «Կուսակցութիւնը բոլոր մարմիններով իր վրայ տարաւ պետական գործի ամբողջ ծանրութիւնը: Իսկ պետութիւնը զգալի չափով ամրացաւ եւ զարգացաւ»[2]:

ՀՅԴ դիվանագիտական աշխատանքները ևս առանձնակի դեր ունեցան, որի մասին նշել է «Հայրենիք»-ը. «Հայ ժողովրդի տեղահանութիւններու եւ հայկական կոտորածներու ընթացքին եւ յատկապէս Հայաստանի Հանրապետութեան ծագումէն ի վեր Ամերիկայի Հ.Յ. Դաշնակցութիւնը կազմակերպած եւ նպաստած է հայանպաստ Մարմիններու, առաջ տարած է հայանպաստ պրոպագանդը, ուժ տուած է Նիւ Արմենիա-ին, կազմակերպած Հայաստանի Անկախութեան Կոմիտէն, որ այնքա՜ն կարեւոր դեր խաղաց՝ Հանրապետութեան անկումէն վերջն ալ»[3]:

1918 թ. ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման գործում դիվանագիտական առումով մեծ դեր և ներդրում ունեցավ 1917 թ. որպես Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչ և Էջմիածնի կաթողիկոսի պատվիրակ ԱՄՆ ժամանած Գարեգին Փաստրմաճյանը (Արմէն Գարո): Նա «Հայաստանի Հանրապետության հռչակումով, եղաւ Հայաստանի ներկայացուցիչը Ուշինկթընի մէջ: Այնչա՜փ խորապէս համոզուած էր Հայաստանի անկախութեան տեւականութեան, որ չուզեց վարձակալ ըլլալ եւ ժողովրդային նուիրատութեամբ գնեց Ուշինկթընի Հայկական Դեսպանատունը: Իր ջանքերուն շնորհիւ, Միացեալ Նահանգներու կառավարութիւնը առաջինն ըլլալով, ճանչցաւ հայկական անկախ հանրապետութիւնը: Այդ լուրը Հայրենիքին կը հաղորդէր Ուշինկթընէն հեռագրով մը, որուն մէջ կ'ըսէր «Կեանքիս ամենաերջանիկ օրն է. Միաց. Նահանգներու կառավարութիւնը ճանչցաւ Հայաստանի Հանրապետութիւնը»[4]:

Ամփոփելով՝ նշենք, որ ՀՅԴ-ն կարևոր ներդրում ու ներգրավվածություն է ունեցել սփյուռքում հայապահպան գործունեության ասպարեզում: Կարծում ենք, որ ՀՅԴ գործունեության նորովի արժևորման ու վերագնահատման յուրաքանչյուր փորձ կարող է առավել նպաստել հայապահպանության, սփյուռք-հայրենիք կապի ու միասնության ամրապնդման, ազգային շահերի և արդեն 100-ամյա պատմություն ունեցող համազգային նպատակների իրագործման, համազգային պահանջատիրության իրականացման ռազմավարությունն ու հեռանկարները ուղենշելուն:

Алик Гарибян, Гаяне Галстян, НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США. В статье анализируется процесс появления партии Армянская Революционная Федерация «Дашнакцутюн» в США и ее последующая деятельность. Уточняются идеологические основы и мотивы деятельности АРФД. Выявляются предпосылки появления АРФД в США в контексте деятельности филиалов других национальных политических партий и союзов, сформированных в США, делается попытка выявить роль АРФД в реализации общенациональных целей, предпосылки формирования основной идеологии партии.

---

[1] *Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւնը, Պատմական ակնարկ, «Հայրենիք», 1922, № 1, նոյեմբեր, էջ 53:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Միքայէլեան Ա., նշվ, աշխ., էջ 142-143:*

[4] *Թաշճեան Ն. Թ. Ս., Սանասարեացիները Դաշնակցութեան մէջ, «Հայրենիք», 1931, № 4 (100), փետրուար, էջ 131:*

Представлены также цели и задачи деятельности АРФД в США. Выдвигается идея, что появление АРФД в США было историко-политической, общественно-культурной необходимостью.

Ключевые слова: *диаспора, община, сохранение армянской идентичности, эмиграция, партия, идеология, деятельность, посольство, иммиграция.*

Alik Gharibyan, Gayane Galstyan, THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA. The article analyzes the process of the appearance of the ARF Dashnaktsutyun in the United States and the subsequent activities of the party. The ideological foundations and motives of the ARF are clarified. The prerequisites for the emergence of the ARF in the United States in the context of the activities of branches of other national political parties and unions are identified, an attempt is made to identify the role of the ARF in the implementation of national goals, the prerequisites for the formation of the main ideology of the party.

The goals and objectives of the ARF in the United States are also presented. The idea that the emergence of the ARF in the United States was a historical-political, socio-cultural necessity is approved.

Key words: *Diaspora, community, preservation of Armenian identity, emigration, party, ideology, activity, embassy, immigration.*